ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 9.1.5 ենթակետի պահանջները,

հաշվի առնելով կարգապահական վարույթի իրականացման ժամանակ անհրաժեշտ ծանուցագրի և այլ փաստաթղթերի ձևեր սահմանելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սահմանել կողմերի իրավունքների և պարտականությունների պարզաբանման մասին ծանուցման ձևը (Ձև ԿԳ-1)՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Սահմանել կարգապահական գործը նախապատրաստող անձի եզրակացությունը պատասխանող փաստաբանին տրամադրելու մասին ուղեկցող գրության ձևը (Ձև ԿԳ-2)՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սահմանել կարգապահական գործը նախապատրաստող անձի եզրակացությունը դիմողին տրամադրելու մասին ուղեկցող գրության ձևը (Ձև ԿԳ-3)՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

4. Սահմանել նախապատրաստող անձի կողմից եզրակացությունը և կարգապահական գործը Պալատին հանձնելու մասին ուղեկցող գրության ձևը (Ձև ԿԳ-4)՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

5. Սահմանել բացատրություն տալու համար հրավերի մասին ծանուցման ձևը (Ձև ԿԳ-5)՝ համաձայն թիվ 5 հավելվածի:

6. Սահմանել կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացության ձևը (Ձև ԿԳ-6)՝ համաձայն թիվ 6 հավելվածի:

7. Սահմանել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին Պալատի խորհրդի որոշման ձևը (Ձև

30 մարտի 2021թ.
թիվ 62-Լ

ԿԳ-7)՝ համաձայն թիվ 7 հավելվածի:

8. Սահմանել անդամավճար չվճարելու հիմքով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին Պալատի խորհրդի որոշման ձևը (Ձև ԿԳ-8)՝ համաձայն թիվ 8 հավելվածի:

9. Սահմանել Պալատի խորհրդի նիստի արձանագրության համառոտագրի ձևը (Ձև ԿԳ-9)՝ համաձայն թիվ 9 հավելվածի:

10. Սահմանել կարգապահական գործի ամփոփաթերթի ձևը (Ձև ԿԳ-10)՝ համաձայն թիվ 10 հավելվածի:

11. Ուժը կորցրած ճանաչել Պալատի նախագահի 23.01.2015թ. թիվ 19-Լ որոշումը:

12. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին սույն որոշման մասին իրազեկել Պալատի խորհրդի անդամներին, կարգապահական գործերը նախապատրաստողներին և կարգապահական գործերը համակարգողին, ինչպես նաև այն հրապարակել Պալատի կայքէջում:

13. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

30 մարտի 2021թ.
թիվ 62-Լ
ք.Երևան